

## Չ Ո Չ Ո · Ք Ա Ր

(Պատկերներ գիւղից)

Իջել էինք սոյլից, թողնելով որ հեիհե դար նա միանալու մեղ։ Մագլցել էինք վերջին քարաժայռը և այժմ նրա միւս կողմն անցած՝ նստել էինք անմոռնուկների մի շքեղ մարդի վրայ և դիտում հեռանկարը, որ փուռում էր մեր ոտքերի տակ։

Ամառնամուտի այդ սքանչելի պահուն, դիշերային առատ ցօղի տակ ճղփացող պուրակն ու անտառը միւնանց ետևից բացւում էին ներքեւում, ազատուելով հետզհետէ ցրուող մշուշից։

Սեպաձե, հսկայ ապառաժներով անտառոտ լեռները, մազերը գլուխների վրայ դիղացած վիթխարիների նման, դադաթնին ամպերի մէջ, կողերն ի վար հոսանուտ ժայռեր թաւալագլոր, այսայն կողմ աշյատակ խորխորատներ, մթին անդունդներ ու կանաչ հագած ծործորներ՝ յաջորդում էին իրար։

Մշուշն իջել էր մինչեւ հովիտների խորքը և այժմ դանդաղ, արևի ծագելու հետ, իր ընդարձակ ծաւալով որորտում էր ծայրերից, բրդի խոշոր քուլայի նման օրորտում ծառերի ծայրերին և վարանելով մաքրում բռնած տարածութիւնը, սահելով լեռներն ի վեր։

Լուռ և անշարժ մնացել էինք։ Ոչ իսկ կարողանում էինք հաղորդել իրար մեր պանչացումը։

Ահա ուրեմն, թէ որպիսի՞ բնութեան մէջ էինք գնում ապրելու. — այդ ներքեւի շքեղ հովիտներում, անտառոտ բլուրների կողերին...»

Ու բացւում էր հորիզոնը մեր աշքի առաջ՝ մանխ-  
շակագոյն և փոշելից։ Հեռաներն սկսում էին շնչտուել.  
Մըջակայ գիւղերն ու գալարուն, կամրյա օձերի պէս  
դէպի վեր սողոսկող ծխի անօսր սինակները երևան  
էին դալիս բլուրների ստորոտներում։ Բայց գեռ խո-  
րին, անշշուկ լուսթիւնն էր թագաւորողը։ Կարծես ու  
շնչ գեռ չէր զարթնել. ոչ մի թոշուն, ոչ մի բայց  
Անլսելի էին նոյնիսկ հեղեղատների և ջրվէժների կար-  
կաչները։

Այդ խորին լուսթեան մէջ էր ահա, որ յանկարծ  
մի սուր, երերաւն զօղանչ թրթռաց, ելեէներով բաղ-  
խուեց ժայռերին, թնդաց, ապա մեղմացաւ և իջաւ  
հալուելու անտառի գրկում։

— Քարկող գիւղի զանգն է. ասաց ընկերս,

Ներքե, թերակղզու նմանող ահաւոր ժայռերի մի  
տափարակ պատուանդանի վրայ գտնուղ գիւղի զանգն էր։

Մի բողէի մէջ կարծես ամենինչ զարթնեց։ Թըռ-  
չունների ճլվոց, հեռաւոր աղաղակներ, նոյնիսկ շների  
հաջոց, ապա՝ բոյս ու թուփ փայլեցին մեր շուրջը,  
ժայռ ու մարդ պապղացին զուարթագին՝ նոր ծագող  
նարնջագոյն արևաշողքի տակ։

Եւ զանգը խորքերում հնչում էր անընկհատ։ Քա-  
նի արագ, այնքան կենդանութիւնն աւելանում էր ամեն  
կողմ, այնքան թոշունները շատացնում էին երգերը և  
այնքան ջրվէժների ձայնը լսելի, աղատուած մշուշի քո-  
ղից, ենում էր ձորերն ի վեր և դալիս էր համնելու  
մեջ։

Որքան գեղատիպ էր այդ միջոցին հեռաւոր դաշ-  
տի հեռանկարը։ Այնտեղ, ընդարձակ տարածութեան  
մէջ, տեղանեղ ցցուած էին կանաչ, կարմիր տանիքնե-  
րով գիւղեր, մէջառմէջ՝ արևի ցուքի տակ գալարուող  
ջրեր, իսկ առաւօտեան ցողի ականակիս կաթիլները  
շողշողում էին մենամի ծաղկի—մանսւշակի, անմոռնուկ-  
ների և զանգակիկների շուրթերին։

Եւ հեռուն, շատ հեռուն, սպիտակ շերտերով շար-

Ժւռամ էին հօտերը, սեխն էին տալիս նախիրներ, թացութիւնն էլ այդ ամենը շեշտում էր, տալով հողին, ժայռին՝ թարմ գորշ գոյն, լուացած լինելով թփի և բոյսի փոշին:

—Այնտեղ է ահա գիւղը, մատը պարզեց գէպի հեռաւոր հորիզոնը՝ ընկերու եւ մեր հայեացքները ուղղ դաւեցին գէպի մշուշալից բլրակները:

Միքանի ժամ ևս, և պիտի գնայինը այդ կանաչ, երանաւէտ անուշաբոյր վայրերում հանգչելու, թողած քաղաքի սեղմ օդը, ժիսրն ու աղմուկը:

Մինչ այդ, մեր սայլը, բազմաչարչար այդ փայտէ արկղը, ցնցուելով, ճռճռալով, ամեն քայլին փշուրփիր շուր լինելու սպառնալով՝ դալիս համսում էր մեղ:

Զառիվերը վերջացել էր. պիտի իջնէինը այնուհետեւ. քիչ յետոյ անտառն էլ ցանցառանում էր և դաշտի բաց հորիղոնը իր կանաչ տարածութեամբ մի նոր հըսնուանք էր պատճառում:

Միքանի ոստիւններից յետոյ սայլը կանգ առաւ և նստեցինք: Իջնում էինք արագ, իրաւ է, սակայն դեռ էլլի քսան րոպէ անհնար եղաւ բառ իսկ արտասանելու վառչում էինք սայլի կողերին, սրտերնիս դող էր ելնում, երբ անտանելի արկղը ծուռում էր գէպի անգունդը՝ սսակալի ցնցումներ գործելով քարակոյտների վրայ: Առ կանջ խլացնող նրա դպրդիւնը գրաւել էր մեր ամբողջ լազութիւր:

—Քիչ տեղ է. յաջողուեց ասել մեղ ընկերու, որ տեղացի մի երիտասարդ էր և քաղաքում ընակուող: — Երբ այդ Զռչո-քարն անցնենք, այնուհետեւ հարթ է:

Զռչո-քար կոչուածը մի ժայռոտ և անտառապատ լեռ էր, որ ցցուում էր կնճռուտ ձորակի ծայրին: Տեսնում էինք նրա կրծքի վրայ, ապառաժները ճեղքած և գէպի անդունդը խոնարհուած կաղնիների տակ, մթին, խոշոր քարայրներ, գէպի որսնց հասնելը մեղ թւռում էր ուղղակի անհնարին:

Եւ երբ քեզ աւելի հարթ տեղ էինք հասել, հարցը—  
րի նրանց մասին։

Այնտեղ մեզուի փեժակներ էին պահում գիւղացիք. երեխ առաջ փարախներ են եղել և կամ, ով գիւտէ, ի՞նչ Սակայն այդ այրերը նշանաւոր են նրանով, որ այնտեղ են սպանուած եղել Հասար գիւղացի չորս յայտնի եղբայրները... Անշուշտ լսած պիտի լինէինք նրանց մասին։

—Ո՞չ, ասացի ես —ի՞նչ եղբայրներ են դրանք։

Ըսկերս գլխովը համբերութեան հրաւիրեց, մինչ չե որ մեր աղիքները հանգիստ գտնէին քարերի վրայ ոստնող ասյլից։ Եւ երբ վերջին վայրի տանձենուց յետոյ հարթ տեղ ընկանք, այնտեղ, մինչ ձիերին շունչ էին առնել տալիս, պատմեց մեղ Զռչուքարի մասին։

—Հասարցի չորս եղբայրներ էին, իրանց գիւղի ամենակտիբները։ Տունուտեղ էլ ունէին, ամենքից մեծը, որ յիսունամեայ հակայ մարդ էր, մեր լեռների հարազատ ծնունդը, ամուսնացած էր, միայն մի մանուկ ունէր, տասնամեայ տղայ, միւսները ամսուրի էին, ամուրի էլ մեռան... Դուք, իրան, չէք էլ լսել Դուզանի Յարէթ աղայի մասին...»

—Դուզան, դա այն գիւղը չէ, ուր գնում ենք մենք ապրելու։

—Ոչ միայն այն է, այլև Յարէթ աղայի որդու հետ է, որ ընկերացել էք՝ նրա հողերը մշակելու համար։

—Հետաքրքիր է. պատմեցէք, մենք ոչինչ չենք լըսել...

—Յարէթ աղան, սկսեց ընկերս—քաղմահարուստ մի աղա էր իր շրջանում։ Հարուստ և լիրբ... փողի ոյժը փորձել էր և լրբացել... փողը, մանաւանդ այսպիսի խոռոշ աեղերում, տէր և իշխան է ամեն բանի... Ունիս փող—ունիս ամեն ինչ, կարող ես գոռալ, կանչել, հայհոյել, ծեծել... անհոգ կաց, ամենքը կատու կը դառնան առաջդ, քանի ամուր զարնես, այնքան աւելի

կը քծնեն. քանի պինդ դոռաս, մյնքան աւելի լեզունեւրը դուրս կը հանեն... փաղ ունիս. դա հանգք բան չէ... Եւ Յարէթ աղան փող ունէր. շատ փող... Այս պէս կամ այնպէս՝ դիղել էր նա բաւական, տուկոսով էր տալիս—ի նկատի ունեցէք, հարիւրին ամենապակասը 20, յաճախ 40, և դեռ ընծաներն աւելի, ձրի աշխատեցնելը, ունէ բան կէս գնով պարտատէւրից կորզելը, գիւղի մէջ ամենալաւ պատառների տէր դառնալը... Ու գիւղում էր այդպէս կենտրոն էր գտել իրան և կամաց-կամաց շրջան էր դժում իր չորս կողմը, ձեռքը հասնելու չափ ոտների առաջն էր քարշ տալիս հասնողների... Նախ, իր գիւղացոց էր ստրուկ շինել, մուրհակներով, գրաւներով շղթայել, յետոյ, շրջանը մեծացրել էր այնքան, որ հասել էր մինչև այս կողմերը, մինչև հասար և դեռ էլ հեռուն... Գիւղացի չկար՝ որ պարսք չունենար նրան... Ծոկոսները հէնց, մի տարուայ տոկոսը ինձ ու իմ ընտանիքիս կ'ապահովացնէր ընդմիշտ... Միայն կանխիկ փող այնքան թողեց, որ կը հաւատամս, նրա մեռնելուց յետոյ որդին քաղաքում ցորենի նման, բռով գէսուդէն ցրուելով հաղիւ 3—4 տարում հասաւ իր շորերը ծախելու օրին... Ու այսպէս, ընկերս սկսել էր պատմել՝ յատուկ դառն, կծու հեղնութեամբ լի, սրախօսութիւններով և տարօրէն պատկերացումներով:

— Լաւ մարդ է եղել... ծիծաղեց փեսաս,

— Ազգեցիկ մարդ էր. շարունակեց ընկերս—այնքան ազգեցիկ, որ ահա 18 տարի է նրա մեռնելը, բայց ես իսկ չեմ յանդգնիլ այս պատմութիւնը ճշտուրէն պատմել մեր գիւղում... Աստուած աղատի. եղբայրներ, եղբօր որդիներ... այնքան էլ շատ են նր... տհւելու կը քանդեն... Գիւղ մանենք, ձեղ ցոյց կը տամ եւ կեղեցու կողքին նրա գերեզմանը. ամենաչքեղն է. վանդակապատ. վանդակներն էլ կանաչ իւղաներկ...

— Գիւղացիք են շինել.

— Որդին... գիւղացիք միայն թոյլ տուին, կարծեմ

միջնորդեցին էլ առաջնորդին, որ եկեղեցու դռան մօտ թաղուի... «Առասահոգին իշխան մարդ էր»—մինչև հիմա էլ ձեզ կ'ասի մեր գիւղի վսոլեռան»...

— «Խոլեռանն»... դա ով է:

— Կը ծանօթանաք. ծիծաղեց ընկերս—երբ ամառուայ շոգին, խանութների առաջ մուշտակով նստած տեսնէք մի մեծ փափախով դժողոյն, կարծես խոլեռածերունի—դա վսոլեռան» է...

— Յետո՞յ, միջամտեց վեսաս—վաշխառուի պատմութիւնդ շարունակիր:

— Մ'ս... զգոյշ՝ խրատեց ընկերս՝ կուանալով դէպի մեզ—սայլապանը մեր գիւղացին է. իմացէք, ձեր ոչ մի ածականը չի մոռանալ դոյականին կպցնելու... Եւ դա կ'անի այն ժամանակ, երբ ուեէ բանով վիրաւորէք նըրան. օրինակ՝ կովին շխողնէք որ ձեր բանջարներն ուտի և կամ այծերին քշէք, եթէ նըրանք խմբովին այցելեն ձեր տնկած ծառերին...

— Պատմութիւնդ չմոռանաս...

— Ո՛չ. ժպատեց ընկերս—18 տարի է որ չեմ մոռացել: Ես դեռ երեխայ էի այն ժամանակ. բայց երեխի թոռն էլ, եթէ ձեր թոռներին հանդիպի, նոյն ճշշտութեամբ կը պատմի նըրանց թարէթ աղայի և չորս եղբայրների մասին... նմանը չտեսնուած դէպք էր այդ... Ահա, նայէք. այժմ պարզ երեւում է այդ կազնիների խումբը բարայրների վերևում... այդ մացառները... Այնտեղ էր որ երկար ժամանակ ապաստան գտան չորս եղբայրները, այնտեղ էին խեղճերը ձգել իրանց վերջեն արիւնոտ ըսպէներին... Ես ոստնում եմ մեր արկղի պէս... վերադառնանք ուրեմն թարէթ աղային... Եւ այսպէս, նա իր գրապանի, բռան մէջ էր հուպ տուել մի ամբողջ գաւառ: Իր իւղը, պամիրը, բուրդն ու հնձուօրները—տոկոսի տոկոսներն էին. իսկ տոկոսի տոկոսի տոկոսները—«այսօր բազմ փորելու եկ, Արշմկի... էգուց եղներդ զրկեր գովթանի, Մարկն... Եկող շաբաթ պատս պիտի շինես, ուստա Ղազար...» և կամ—«Էս-

ուր ես, այ հարամզադա Թորոս, բաս թողնելու ես  
որ էս ծեր հալովս ես գնամ ցորենս հնձեմ բերեմ կա-  
լը... Հասկանում էք... Սրանք բուն տոկոսները չեին  
դեռ. բուն տոկոսները սկսում էին ձմեռնամուախն...—  
«Լազար, մուրհակիդ օրը հասել է... Ադա Մարինա, փո-  
ղըս չես տալու... Տօ Արշակ, թէ փող չունիս տոկոսը  
տալու, էլ ուր ես հարոցիդ խոտը տունդ տանումն...  
Եւ ժողովում էր, և' ճղմում սարդից աւելի անդութ,  
վամպիրից աւելի խիստ...»

Օրերից մէկ օր էլ... բայց սպասէք, կարծես մեր  
«զութին» (սայլին էր ակնարկում) ուղում է էլի պար-  
դալ...

Յիրաւի, զառիվայրից դէպի մի հեղեղատ էինք  
սլանում արագութեամբ Զանացինք շունչերնիս բռնել,  
աղիքներնիս ձգտել և սայլի կողքերին կառչել, որպէսզի  
քարերի ցնցումներից չպարտուէինք դուրս:

Երեք-չորս րոպէ տեսեց, բայց որպիսի րոպէներ...  
Անցանք սակայն, ազատ շունչ առինք ու վազում էինք  
կիսախարխուլ երկու—երեք խրճիթների առջևից, ուր  
դիմաւորեցին մեզ 5-6 կատաղի գամփուեր:

—Փարախներ են...

—Օրերից մէկ օր էլ... շարունակեց ընկերս—Պատ-  
մում եմ, լսեցէք... այդպիսի փարախներ շատ կը տես-  
նէք... Յաբէթ աղան լուր է ուղարկում Հասար, Սոլո-  
մոնին թէ՝ «Դէ շուտ, երկու օր կայ մուրհակիդ լրա-  
նալուն, փողն ու տոկոսը բեր, որ էս ա գալիս եմ տա-  
ւարդ առաջս անեմ—քշեմ ու ծախսմ»...

Բանն այն է, որ խեղճ Սոլոմոնն ու իր եղբայները  
վաղուց պարտք ունէին աղային: Մի տարի տաւարների  
հիւանդութիւնը կոտորել էր գոմէշներին, եղներն էլ  
սովածութիւնից ընկել-սատկել էին, տուրք պիտի  
տային, ինչ անէին, միքանի, կարծեմ հէնց երկու հա-  
րիւր րուբլի տոկոսով առել էին. 40 տոկոսով. պարտքն  
էլ, գիտես, խօ, ձնադնդի նման գլորուել էր—գլորուել,

սար էր դարձել և դեռ էլի գլորւում, Զոշոշարի չափ  
լինում...

—Երևի երկու հարիւրը չորս էր դարձել. դիտեց  
վեսաս:

—Առանց տոկոսների... Դէհ, խեղճ Սոլոմոն և եղա-  
բայրներ, չորս հարիւրը մի անգամով ի՞նչպէս տային.  
այդ տարի էլ, հակառակի պէս անձրւային, կալերը  
ծլել էին, դեսնախնձորը փչացել... անիծուի այս եր-  
կիրը, ամեն տարի խօ այդպէս է... Յարէթ աղան, ով  
դիտէ ինչու—երևի Սոլոմոնը շատ խսնարհ ողջոյներով  
չէր հանդիպել նրան—թշնամացել էր, այժմ իր բոլոր  
առնելիքն էր ուզում... Մի կողմից էլ երևի տեսնում  
էր որ պարտըն աճում է, իսկ վճարող աղբիւրը ցամա-  
քում, մտածում էր՝ քանի շուտ էր, եղածը սաղացնէր...  
Պահանջում էր, կարող ես գոռալ, վիճել. ձեռք ես քա-  
շել—պիտի վճարես... Սոլոմոնս է, շատ դէսուդէն է  
անում, լուր է ուղարկում - աղաչում, բայց տեսնում է  
որ աղան անդրդուելի է, մի օր էլ չարուխները հագ-  
նում—ուզքով Դուզան է դալիս, որ ինչ է՝ անձամբ ա-  
ղաչի, պաղատի, գուցէ մուրհակը կարուանայ նորոգել  
տալ... Մի 20-30 մանէթ էլ, ոնց որ լինի, ճարում է,  
որ տոկոսները վճարի, գուցէ խղճան և ժամանակ տան...

Գալիս հասնում է գիւղ, որ Յարէթ աղան նստել  
Սերովենց գուրանումը, գլախն է հաւաքել գեղացոց  
ու դալմաղալի մէջ է, տոկոսներն է հաւաքում, նեղսըր-  
տուել է, գոռգոռում է, հայհոյում...

Բարե, Աստծու բարին...

—Հա, եկամր... եկ տեսնենք, գոնէ դու պարտըդ-  
բեր, թէ չէ ես անիծածները ինձ սոված են թողնելու  
այս ձմեռ...

—Աղա, ես...

—Հը՞, ինչ կայ... քեզ հետ էլ կռուենք... Տօ, էս  
ինչ անամօթ, լիրը խալիս էք... փող էք ստացել՝ գե-  
բերէք տուէք, էլի... էլ ուր էք նեղացնում, էս կիրա-

կի օրով հայհոյանքներ հանում բերնիցո... Զի լինիլ,  
չէ, ամբողջը պիտի տաս, հերիք է համբերածո...

Սոլոմոնի լեզուն ասես՝ կապուել է... Անձայն, հա-  
նում է 30 մանէթը դնում աղայի առաջ և աղաչում  
թէ—էս է եղածը, աղա, որ բամես մեղ, աւելին չու-  
նինք... մուրհակը նորոգիր, դուցէ դարնան...

- Ո՞նց թէ դարնան... Տօ իծի մօրուք, ես քո  
խաղալիքն եմ, եա թէ չէ փողը դաշտիցն եմ դաել...  
բաս իմ տղերքը հաց չեն ուզիլ, դու դարնան կարող  
ես չորս-հինգ հարիւր մանէթ մի անդամով տալ...

Էլ ինչ է լինում, ինչ չի լինում—մի թունդ կուիւ ու  
հայհոյանը՝ հետեւում է դրան... խօ գիտէք, մեր գիւ-  
ղացիք ինչ որ չգիտենան, կիսակի օրով կուուելն ու  
միմեանց հայհոյելը շատ լաւ գիտեն. մէկ էլ որ, մի  
թեթև պատճառ՝ և ահա միմեանց էլ հայր, էլ պապե-  
րի գերեզման...

Մանրամասն չէ հասել մեղ թէ ի՞նչպէս է լինում  
որ Յարէթ աղան մի թունդ, լկտի հայհոյանք է բաց  
թողնում բերնից, ետևից էլ մի մեծ ապտակ հասցնում  
Սոլոմոնին... Մէկ էլ ինչ տեսնեն... Սոլոմոնս է, մոռա-  
նում է աղա, պարագ, անճարութիւն, արիւնը գլխին  
է խփում, տանում է բերում և այնպիսի հարուած հաս-  
ցնում աղային, որ սա ետեւ է դնում ու խանութիւ-  
գետինը չափելու պառկում...

Մէ խառնաշփոթ, մի աղաղակ... Ո՞նց, Յարէթ  
աղան ծեծ ուտի, խանութի փոշին աւելի...

Բայց դէհ, թափուում են գիւղացիք, մէջ են ընկ-  
նում, աղային բարձրացնում, շորերի փոշին թափ տա-  
լիս, ճգնում են հաշտեցնել, Սոլոմոնին են համոզում,  
աղային՝ ներել աղաչում... բայց ոչ կտրին և սրտի խոր-  
քից վիրաւորուած լեռնցին է ուզում աղաչելով հաշ-  
տուել և ոչ էլ լիրը ու երես առած բռնաւորը՝ զիջել և  
ներել.

—Գնա, կանչում է նա կատաղած—գնա, ես մարդ  
չեմ լինիլ, եթէ դու և բոլոր ցեղդ այս ձմեռ չկոտո-

բուէք քաղցածութիւնից, շան որդիներ, աւազակներ...  
Ու կատարում է սպառնալիքը՝ ծշմարիտ է, կերած  
ծեծը ոչինչ, բայց մէկ մտածէք... Յաբէթ աղան, գա-  
ւառի գլխին կակալ կոտրողը, ամենգի վրայ անպատիժ  
գոռացողը, ամենքին վախուզող աղողողը... և յանկարծ,  
ծեծուած մի ինչոր լեռնցուց, փոռուած գետին, ոտո-  
քի տակ, այն էլ ողջ գիւղի առաջ... Վաղը չէ որ լուրը  
կը տարածուէր, ամբողջ նահանդի խօսելիքը կը գառ-  
նար... Ոչ, պէտք էր ցոյց տալ, և լաւ ցոյց տալ, որ  
անպատիժ կերպով չէր կարելի նոյնիսկ բարձրածայն-  
խօսել նրա նման «իշխանի», նրա նման գաւառի մեծի,  
աղայի հետ...

Այդ ձմեռ Սոլոմոնն ու ընտանիքը, բոլոր եղբայր-  
ները, յիրաւի, մնում են համարեւ անօթի։ Աղան ամեն-  
կերպ աշխատում է և փողի ուժով յաջողուում է հասցը-  
նել նրանց այդ դրութեան։ Խլում է տաւարը, խոտը,  
կալի արդիւնքը... Սոլոմոնի կինը, կրած տանջանկներից  
մեռնում է, թողնելով որբ տանամեայ մանուկին...

Գարունը երբ բացւում է, այլևս չկան ոչ եղ, ոչ  
գոմէշ, ոչ սերմացու, ոչ փող... Չորս եղբայրները դառ-  
նում են օրուայ հացի կարօտ մարդիկ...

Եւ մի խորունկ դայրոյթ, վառուղ կատաղութիւն  
բռնկում է մի ժամանակ մեծ, առատ տան զաւակների  
սրտի մէջ։ Աւելացրէք դրանց վրայ Յաբէթ աղայի ծաղ-  
րը, չարախնդաց ակնարկները, ամեն տեղ, ամեն բա-  
նում նրանց մասսելը...

Ոչ, տանել չէր կարելի այլես։ Հարկաւար էր քան-  
դուած օջախի վրէժն առնել, գաւառն ամբողջ ազատել  
կլանող հրէշի ձեռքից, վիշապի ակռաները խլել...

Այս և ուրիշ այդ տեսակ մտքեր ներշնչում են եղ-  
բայրներին՝ թողնել ամեն ինչ և ընկնել լեռները։ Մե-  
գիշեր էլ զինուած, ինչում են Դուզան, գտնում գիւղի  
գիշերապահներից մէկին, ստիպում որ նա մի պատ-  
րուակով բաց անել տար Յաբէթ աղայի տան դուռը,  
ներս են նետում և բռնում աղայի կոկորդից։ Մէկը

դանում է բոլոր մուրհակները, դիզում, վառում է, իսկ Սոլոմոնը վար է բերում տանտիրոջ արծաթապատ հրացանը, կամենալով զրկել նրան պաշտպանուելու միջոցից։ Սպառնում է սպանելու, եթէ նա չէր ցոյց տալ փողերի տեղը և այդպիսով մտածում է իրանց քանդած տունը վերանորոգող գումար ձեռք բերելուց յետոյ՝ թողնել հեռանալ։

Յարէթ աղային և ոչ ճշալ է յաջողուում։ կինն ու որդիները սարսափահար՝ կծկում են անկիւնում։ օգոնութիւն կանչել անհնար է։ գիշերապահի վրայ իսկ հսկում է եղբայրներից մէկը։

- Ուրեմն մտադիր չեն եղել սպանել աղային։ հարցնում եմ ես, ընդհատելով։

- Ո՞չ, արիւն թափել ոչոք չէ կամենում։ Սոլոմոնը մինչև իր կեանքի վերջը երգւում էր որ նա չէր կամեցել Յարէթ աղայի մի մազն իսկ շարժել տեղից, այլ միմիայն գիզած մուրհակները ոչնչացնել և միքանի հարիւր ըուբի ձեռք բերել-գնալ և ուրիշ երկրում տեղաւորուելու համար... բայց փող քիչ են դանում։ հազիւ երկու հարիւր, աղան, ըստ երևոյթին, զդոյշ մարդ է եղել... ինչ որ էլ լինէր, գլխաւոր խնդիրը կատարուած էր, ամբողջ գաւառի շղթաները—մուրհակները ոչնչացած էին... Եղբայրները գոհ, պատրաստում են հեռանալու։ Սոլոմոնը կամենում է հետը վերցնել նաև աղայի լի հրացանը, վախենալով որ ետևիցը ըլխփեն իրան... Խելօք էր մտածում։ Յարէթ աղային ճանաչողը պիտի իրաւունք տար Սոլոմոնի կասկածներին...։

Բայց, գրուած էր,—մուրհակներից յետոյ նրանց տէրը ապրել չէր կարող... Յիմարութիւն է գալիս Յարէթ աղայի վրայ այդ միջոցին, թէ, յիրաւի, նա կամենում է եղել եղբայրներին ետևիցը զարնել—փաստն այն է, որ նա անմիջապէս բռնում է հրացանի փողիցը և չի թողնում որ տանեն։

— Ինչ որ տարար, վնաս չունի, գոչում է նա—  
բայց հրացանս թող, պապենական յիշատակ է...

— Թող տուր, շնչն, ճգնում է նրա ձեռքիցը քաշել  
Սոլոմոնը—թողնեմ՝ որ ետևիցս զարնես մեղնից մէ-  
կին...

— Ռչ, երդուում եմ...

— Երդուում... քեզ նման շնչնը... թող տուր...

Եւ պինդ, դետնի երեսին քարշ գարվ կառչում է  
աղան իր հրացանի փողիցը...

Մինչ այդ, աղայի կինը սթափուում է, դուրս է  
սպրդում և ճիչ ու աղմուկ բարձրացնում։ Խաւում են  
աղմուկներ, շների հաջոց։ Պէտք էր փախչել, բայց ա-  
զան ձիւթի պէս կալել է հրացանից. ոչ արացիները, ոչ  
գլխին տուած բռունցըները, ոչինչ չեն յաջողւում պոկել  
նրան... Եղբայրները հասկանում են որ զգուելի վաշ-  
խառուն դիտմամբ է սարքում այս տեսարանը, մինչեւ  
օգնութեան համնեն, բռնեն նրանց, և կամ, եթէ հրա-  
ցանը թողնէին, դնդակահար անէր ետևից մէկնու-  
մէկին...

— Շնուտ, եղբայր, ձայնում է Սոլոմոնին կրտսերը—  
գալիս են, վերջ տուր — գնանկը, գիւղը ոտքի է ելնում...

— Ի՞նչ անեմ, թողնեմ հրացանը...

— Տօ ինչ ես շուարել, գոչում է Նուկասը—բլթա-  
կը քաշիր և մէկ շահին ետ տուր...

Փամփուշտին էր ակնարկում. չէ որ հատ 5 կոպէկ  
արժիս Ուզում էր ասել՝ թէ դնդակահարիր...

Եւ իրաւ, ուրիշ ճար չկար... Սոլոմոնը քաշում է  
բլթակը... Խուում է մի խուլ թնդիւն, յետոյ բարձրա-  
նում են ճիչներ, աղմուկ և չորս եղբայրները հազիւ կա-  
րողանում են իրենց դուրս նետել դիւղից, մտնել ան-  
տառները և աղատուել հետապնդումից...

Այլես նրանք զգաչաղաւներ են... Ղաչաղներ աղատ,  
բայց տխուր որ մարդ են սպանել և այժմ հալածա-  
կան, անտուն, մի մանուկ էլ հետերնին՝ աստանդական,  
ոչ մի տեղ հանդիսատ չեն գտնում... Սոլոմոնի երեսից

ժամիտն անհետացել էր... իրաւ է, գիւղացիք օդնում էին նրանց, եղբայրներից դիւզ իջնողին տալիս էին պաշար, ոչխար, հագուստ, սակայն միւս կողմից հալածանը ստիպում էր միշտ շարժուն, միշտ թագնուած, ըարայրների, խիտ անտառների մէջ ապաստանել, ոչ ազգականի կարողանալ երեալ, ոչ ժամերգութիւն լսել, հայրենի գիւղը մտնել...

Այսպէս նրանք փախստական՝ ապրում են ամբողջ ամառը՝ Քանից ձիւորների զինուած խմբեր, նրանց ետևից ընկած՝ որոնում-գտնում են, բայց միշտ յաջողւում են փախել ազատուել, մինչև մի օր էլ, այդ դժբախտ Զոչոք քարի լեռը եղած ժոմանակ, մատնութեան շնորհիւ, թէ պատահմամբ, պաշարուում են յանհարծ, անյօյս այս անգամ էլ ազատուելու...

Ու կուռում են, որքան հնարաւոր է չորս հոգուն, մի մանուկ էլ հետերնին՝ հարիւրի գիւմաց...

Եղբայրներից կրտսերը զարնուում է մի թփի տակ և մեռնում տեղնուաեղ, երկրորդը վիրաւոր՝ ժայռերից դլորւում է ձորը և փշրւում քարերի վրայ. երրորդին գտնում են ոտքը կոտրած՝ մի քարայրի մօտ և նա էլ բանտումն է մեռնում, իսկ Սոլոմոնը արիւնքամ, միքանի գնդակ մարմնի մէջ, տասնամեայ որդուն դրկած՝ նետում է իրեն, ահա, նայեցէք, այն միջին մեծ քարայրը»...

Սայլն այդ միջոցին կանգ առաւ. ձիերից մէկի սանձը կտրուել էր. կառապանը իջաւ, բայց երեկի նա էլ էր լսում պատմողին, որովհետեւ ներքենում կանգ առաւ և փոկը ձեռքին՝ սպասեց.

—Եւ այնտեղ, շարունակեց ընկերս յուղուած - թըշուառ ծերունին, թէև չէ գտնուում, բայց երկու օր պաշարուած, արիւնքամ, անխնամ և անօթի, որդին սեղմած կրծքի վրայ, մեռնում է... անիծելով լեռն ու ձորը, կեանքն ու նրա դառնութիւնները, աղայի ամբողջ ոերունդն ու հայրենի հողը... անիծելով բոլոր նը-

բանց, որոնք սրանի փոխարէն քար են կրում կրծքերի մէջ...

Երկու օրից յետոյ պաշարօղները քայլառքայլ խուզարկելով հասնում են քարայրին և սառած կանգ են առնում արինալից տեսարանի առաջ... ծերունի հայրը արինատապալ մեռած, իսկ մանուկը անօթութիւնից և յուզմունքներից՝ նուազած նրա կրծքի վրայ...

Աստիճանաւորը հրամայում է ձեռք չուալ դիաս կին, ետ քաշուել. լուռ՝ դրկում է մանուկին և հեռանում արինոտ լեռներից...

Պատմեց ընկերս և լուեց:

Դուզանը երևում էր դաշտի ծայրում, իր կարմիր տանիքներով գետեղի ծառաստաններով։ Մեր կառքը, ընկած հարթ հողի վրայ, դլորւում էր արագութեամբ։

—Եւ ինչ եղաւ պատանին, հարցրեց փեսաւ:

—Ուսումի տուին նրան... Այժմ, տեսնողներն ասում են, որ հեռու մի քաղաքում վաւ մարդա է դարձել նա... իսկ թէ այդ վաւ մարդը երբեկցէ պիտի դայ արդեօք դճնէ իր թշուառ հօր արինոտ գերեզմանին մի համբոյր տալու... Զգիտեմ...

Ոչոք չխօսեց այլևս կառապանը նստաւ, ստնձերը ժողովեց ու մտրակեց ձիերին...

Վ. ՓԱՓԱԶԵԱՆ